ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[6]-28.03.2022-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Ոստիկանության մասին» օրենքում լրացվող նոր՝ 9.1-ին հոդվածի 2-րդ մասում «ՀՀ» հապավումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է:	
2.	ՀՀ կառավարություն	**«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի «9.1-րդ» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «9.1-ին» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների գրության ձեւը:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է:	
3.	ՀՀ կառավարություն	**«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում «Ոստիկանության մասին» օրենքին այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է:	